ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՍՊ-ԳՀԾՁԲ-18/05-100-2018

Ք.Երևան

«28» 02 2018 թ.

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը, ի դեմս աշխակազմի ղեկավար Վ. Էլոյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Իմպերիում » ՍՊԸ և, ի դեմս Ընկերության տնօրեն Գայանե Աղյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Սպորտային միջոցառումների կազմակերպում/** « Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն մարզական միջոցառման անցկացման » ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը

տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում): 3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված --- աշխատանքային

օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 10920.0 (տաս միլիոն ինը հարյուր քսան հազար) ՀՀ դրամ, Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով[1]:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:[2]

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

---

[2] *Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը պայմանագրից հանվում է:*

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Եթե պայմանագիրն իրականացվում է գործակալության պայմանագիր կնքելու միջոցով

1) Կատարողը պատասխանատվություն է կրում գործակալի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում գործակալի փոփոխման դեպքում Կատարողը գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում[3]:

7.8 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողությունները) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.11 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.13 Սույն պայմանագիրը կազմված է 14 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.14 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011004489
ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար՝ ------Վ. Էլոյան
(ստորագրություն)

ԿԱՏԱՐՈՂ
«Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Ա.Ավետիսյան 1127
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ 00135548

Տնօրեն ---------Գ.Արդյան
(ստորագրություն)

---

[3] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում գործակալության պայմանագիր կնքելու միջոցով:*

«28» ------02---------- 20 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/05»/00 - ծածկագրով պայմանագրի
2018

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	9262111	**Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն մրցույթի անցկացման ծառայությունների ձեռքբերում** 1. Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակիհամար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» 2018 թվականի մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) նպատակն և խնդիրներն են՝ 1) անհատի բազմակողմանի ու ներդաշնակ զարգացում, նախադպրոցական տարիքի երեխաների առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի ձևավորման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում. 2) նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում տարբեր մարզաձևերով մարզվելու կողմնորոշման ձևավորում: 2. Խնդիրներն են՝ 1) ֆիզիկական վարժությունների միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում շարժողական ընդունակությունների ձևավորում, առողջության ամրապնդում, առողջ ապրելակերպի գաղափարի ձևավորում. 2) նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի քարոզչություն, ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի կարևորում. 3) նախադպրոցական տարիքի երեխաների համար ֆիզիկական դաստիարակության, ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար նպաստավոր պայմանների ստեղծում. 4) նախադպրոցական հաստատություններում (այսուհետ՝ Հաստատություն) ֆիզկուլտուրային, առողջարարական և զանգվածային մարզական աշխատանքների կազմակերպման աշխատանքների խթանում:	դրամ	10920000	1	*2-րդ փուլ ՀՀ 40 քաղաքներում, Երևան քաղաքի 9 վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում* *3-րդ փուլ ՀՀ 10 մարզկենտրոն ներում,ք. Երևանում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում*	II եռամսյակ (20.04.2018-22.06.2018 թթ.) 20.04-10.05.18թ 25.05-05.06.18թ

		3. Մրցույթն անցկացվելու է 4 փուլով. 1) 1-ին փուլ՝ Հայաստանի Հանրապետության համայնքներում, Երևան քաղաքի վարչական շրջաններում և Արցախի Հանրապետության նախադպրոցական հաստատություններում նախակրթարաններում, մարտ-ապրիլ ամիսներին. 2) 2-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության 40 համայնքներում, Երևան քաղաքի 12 վարչական շրջանների և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2018 թվականի ապրիլի 20-ից մայիսի 10-ը. 3) 3-րդ փուլ՝ Հայաստանի Հանրապետության մարզերում, Երևան քաղաքում և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքում 2018 թ. մայիսի 25-ից հունիսի 5-ը. 4) 4-րդ՝ եզրափակիչ փուլ (հանրապետական), 2018 թվականի հունիսի 21-ից 22-ը ք. Երևան: 5) Համայնքային և մարզային փուլերի անցկացման ժամանակացույցը ներկայացվում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն (այսուհետ՝ Նախարարություն) մինչև 2018 թվականի ապրիլի 15-ը: **4. 2-րդ փուլի մրցույթն անցկացվելու է՝** 1) Արագածոտնի մարզ – ք. Աշտարակ, ք. Ապարան, ք. Թալին, 2) Արարատի մարզ - ք. Արտաշատ, ք. Արարատ, ք. Մասիս, ք. Վեդի, 3) Արմավիրի մարզ - ք. Արմավիր, ք. Էջմիածին, գ. Լեռնագոգ, 4) Գեղարքունիքի մարզ - ք. Գավառ, ք. Ճամբարակ, ք. Մարտունի, ք. Վարդենիս, ք. Սևան, 5) Լոռու մարզ – ք. Վանաձոր, ք. Ալավերդի, ք. Ստեփանավան, ք. Սպիտակ, ք. Տաշիր, 6) Կոտայքի մարզ - ք. Հրազդան, ք. Աբովյան, ք. Չարենցավան, ք. Եղվարդ, 7) Շիրակի մարզ – ք. Գյումրի, ք. Արթիկ, ք. Մարալիկ, գ. Ամասիա-գ. Աշոցք, գ. Ախուրյան, 8) Սյունիքի մարզ - ք. Կապան, ք. Գորիս, ք. Սիսիան, ք. Քաջարան, ք. Մեղրի 9) Վայոց ձորի մարզ - ք. Եղեգնաձոր, ք. Վայք, 10) Տավուշի մարզ - ք. Իջևան, ք. Դիլիջան, ք. Նոյեմբերյան, ք. Բերդ 11) Արցախի Հանրապետություն - ք. Ստեփանակերտ, 12) Երևան քաղաքի 9 վարչական շրջաններում ՝ Աջափնյակ-Դավթաշեն, Ավան, Արաբկիր, Էրեբունի-Նուբարաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք-Նորք-Մարաշ, Շենգավիթ, Քանաքեռ-Զեյթուն: 5. Մրցույթին կարող են մասնակցել նշված համայնքների և մոտակա համայնքների Հաստատությունները:				*4-րդ եզրափակիչ փուլ* ք. Երևան	21-22.06.18թ

6. Մրցույթի անցկացման աշխատանքները համակարգում է Նախարարությունը:

7. 2-րդ փուլի կազմակերպման և անցկացման աշխատանքները համայնքներում իրականացնում են համայնքապետարանները,վարչական շրջանները և քաղաքապետարանները, իսկ 3-րդ փուլի մրցումների կազմակերպման և անցկացման աշխատանքները իրականացնում են Հայաստանի Հանրապետության մարզպետարանները, Երևանի քաղաքապետարանը, Արցախի Հանրապետության կրթության, գիտության և սպորտի նախարարությունը: 4-րդ՝ եզրափակիչ փուլի մրցումների անցկացման անմիջական պատասխանատվությունը կրում է Նախարարության կողմից հաստատված մրցավարական հանձնաժողովը:

8. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության մարզերի Հաստատությունների ավագ տարիքի բոլոր երեխաները *(թիմի կա 5 տղա, 5 աղջիկ և 2 ներկայացուցիչ)*:

9. Մրցույթի կազմակերպման և անցկացման կարգը տեղերում որոշում են կազմակերպիչները՝ համաձայնեցնելով Նախարարության հետ:

10. Մրցույթի 3-րդ փուլի մրցումներին 1-ին տեղերը գրաված Հաստատությունները կմասնակցեն Երևան քաղաքում անցկացվող եզրափակիչ փուլի մրցումներին:

11. Մրցույթի 2-րդ փուլի 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված Հաստատությունները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, մարզագույքով:

12.Մրցույթի 3-րդ և 4-րդ փուլերում 1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրաված Հաստատությունները պարգևատրվում են Նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով,մեդալներով, դրամական մրցանակներով և գավաթներով, իսկ 4-12-րդ տեղեր գրաված թիմերը մարզագույքով և շնորհակալագրերով:

13. Մրցույթի ծախսերն իրականացվում են տարեկան պետական բյուջեով նախատեսված «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթի անցկացում ծրագրի շրջանակում:

2-րդ փուլի

մատուցվող ծառայություններ

20-04. 10-05. 2018թ.

- Հավաստագիր (պատվոգիր). չափը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ

Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՄՖԴՔ վարչության հետ: (150 հատ)

Մարզագույք՝ Նախադպրոցական
հաստատություններին

1-ին տեղը

- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ: (50 հատ)
- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից, չափս № 3-4, յուրաքանչյուր հաստատությանը 4 հատ:

(4x50=200 հատ)

- Մարմնամարզական փուչիկ, բռնակով, 50-60 սմ տրամագծով, յուրաքանչյուր հաստատությանը 3 հատ:

(3x 50=150 հատ)

2-րդ տեղը

- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ:

(50 հատ)

- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից,չափս № 3-4, յուրաքանչյուր հաստատությանը 3 հատ:

(3x50=150 հատ)

- Մարմնամարզական փուչիկ, բռնակով, 50-60 սմ տրամագծով, յուրաքանչյուր հաստատությանը 3 հատ:

(2x 50=100 հատ)

3-րդ տեղը

- Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը

- ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ, յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ:

(50 հատ)

- Գնդակ մանկական՝ կաշվե կամ փոխարինող հումքից, չափս № 3-4, յուրաքանչյուր հաստատությանը 3 հատ, յուրաքանչյուր հաստատությանը 2 հատ: (2x50=100 հատ)
- Մարմնամարզական փուչիկ, բռնակով, 50-60 սմ տրամագծով, յուրաքանչյուր հաստատությանը 1 հատ:

(50 հատ)

3-րդ փուլերում

մատուցվող ծառայություններ

25-05. 05-06. 2018 թ.

- Հավաստագիր (պատվոգիր). չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ:

Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ:

(3x12=36 հատ)

- Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակությունների համար) 50 սմ, 45 սմ և 40 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով՝ վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ:

(3x12=36 հատ)

4-րդ՝ եզրափակիչ փուլում

մատուցվող ծառայություններ

21-22-ը հունիսի 2018 թ. ք. Երևան

- ՀՀ Նախագահի վկայագիր. չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220գ/քմ:

(3 հատ)

- Մեդալներ. չափսը՝ 5 սմ տրամագծով x 3 մմ հաստությամբ, մետաղե ձուլվածք, եռագույն ժապավենով՝ 0.80 սմ երկարությամբ, սինթետիկ հումքից (1-ին,2-րդ և 3-րդ տեղեր գրված մասնակիցներին):

(3x10=30 հատ)

Շնորհակալագիր. չափսը՝ 30 x 20 սմ, թղթե, օֆսեթ, կավճապատ, խտությունը՝ 220 գ/քմ:

Տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի

(9 հատ)

Գավաթ (1-ին, 2-րդ և 3-րդ տեղերը գրված պատվիրակության համար)՝ 65 սմ, 60 սմ և 55 սմ բարձրությամբ, ոսկեգույն, էբոնիտե պատվանդանով վրան գրված միջոցառման անվանումը և տեղը, տեքստը համաձայնեցնել նախարարության աշխատակազմի ՄՍՖԴՔ վարչության հետ:

(3 հատ)

- Մարզադահլիճի վարձակալում՝

Երևանի մարզադահլիճներից մեկում, մարզադահլիճի ձևավորում դրոշակներով և պաստառներով զարդարված:

(1 օր)

- Ռադիոհանգույցի վարձակալում՝

բարձրախոս 7 կվ հզորությամբ, 2 բարձրախոս առանց լարի, 1-ը լարով, միկշերային վահանակ: (1 օր)

- Հաղորդավարի ծառայություն (1 օր)

- Մրցավարների համար մարզահագուստ

բամբակյա կտորից, ամառային շապիկ և գլխարկ, գույնը՝ սպիտակ (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով):

(9 հատ)

- Նվերներ. մարզահագուստ մասնակից բոլոր երեխաների համար՝ կիսասինթետիկ հումքից, վերնազգեստը կարմիր՝ եզրագծված սև և սպիտակ գծերով, տաբատը սև (հանձնվում է անհատույց, սեփականության իրավունքով)

(120 հատ)

Մարզագույք. Մանկական հեծանիվ՝ կարկասը մետաղական, քաշը 9-10 կգ,անիվների տրամագիծը՝ 12-14 դույմ, ղեկի բարձրությունը կարգավորվող և վրա զանգ ամրացված, բռնակները ռետինեպատ, արգելակումն ոտքով, կամ ոտքով և ձեռքով, նստատեղը ռետինապատ և կարգավորվող, հետևի անվադողին կից հավասարակշռող 2 փոքր անիվներ,դիմացի և ետևի անվադողերին ամրացված մետաղյա կամ պլաստմասյա թևակներ. հանձնվում է անհատույց, սեփականության իրավուքով՝ եզրափակիչ փուլում 4-12-րդ տեղերը գրված

նախադպրոցական հիմնարկներին (մեկական): (9 հատ)

- Միջոցառման ավարտին ճայթռուկ (հրավառություն՝ 6 կետից) ծառայության մատուցում, մարզադահլիճում:

<u>Այլ ծախսեր գրենական պիտույքներ՝</u>

- Բաններ միջոցարման անվանումով (խորդանիշով) պատրաստված պոլիէսթերային նյութից, բանների չափը՝ 2 մ x 2 մ, 4 եզրերը մետաղյա օղերով 15-20 սմ հեռավորությամբ, բաների տեկստը համաձայնեցնել ՄՍՖԴՔ վարչության հետ: 1 հատ

ՀՀ եռագույն դրոշ՝ պատրաստված անջրաթափանց կտորից (1.5 մ x 0,9 մ) երեք եզրերը կարված, իսկ դրոշի վերին հատվածը՝ 5 սմ լայնությամբ կարված մետաղական ձողին ամրացման համար նախատեսված: 10 հատ

- Կաշվե թղթապանակ փափուկ կազմով և ՀՀ զինանշանով, 35 սմ x 23 սմ չափսի:

3 հատ

- Թղթե արագակար կավճած ստվարաթղթից, մետաղական ամրակով, A4 (210 x 297 մմ) ձևաչափի թերթերի համար:

20 հատ

- Ֆայլ (թափանցիկ պոլիմերային թաղանթ, A4 ձևաչափի թղթերի համար, արագակալներին ամրացնելու հնարավորությամբ), 1 տուփ:

100 հատ

- Գունավոր ժապավեն սինթետիկ հումքից, գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ (տարբեր գույների):

150 մետր

- Կպչուն ժապավեն (սկոչ):

3 հատ

- Թղթե կպչուն ժապավեն՝ 48 մմ x 100 մ, տնտեսական, մեծ գլանափաթաթված ժապավեն 48 մմ լայնությամբ, սոսնձային շերտի հաստությունը՝ 0,018-0,030 մմ կամ 0,030-0,060 մմ, ժապավենի երկարությունը՝ 100 մ:

3 հատ

Թուղթ A4 չափսի 1 (21 x 29.7), չկավճած թուղթ, օգտագործվում է տպագրման համար, թելիկներ չպարունակող, մեխանիկական եղանակով ստացված, 80 գ/մ^2 (210 x 297) մմ:

2 հատ

- Թղթապանակ (ռեգիստրատոր)՝ 2 օղակով, պլաստիկ, լայնությունը՝ 80 մմ, A4 չափսի:

10 հատ

- Գրիչ գնդիկավոր. տարբեր գույների, տարբեր տեսակի կառուցվածքներով, մեծ և փոքր չափերի:

10 հատ

- Մատիտ, գրաֆիտե միջուկով, հասարակ, սև, համապատասխան կարծրությամբ:

10 հատ

- Ապակարիչ. գրասենյակային ապակարիչ՝ N 10 ասեղներով կարված

թղթերը քանդելու համար:

		1 հատ • Տրանսպորտային միջոց եզրափակիչ փուլի մարզագույքը տեղափոխելու համար՝ մեկ բեռնատար մեքենա:					

ՀՀ դրամ

*Պարտադիր պայման է գույքի չօգտագործված լինելը

** Մրցույթի բոլոր փուլերում պարգևատրվողների ցանկը Պատվիրատուն տրամադրում է Կատարողին, որի հիման վրա նա ծառայության մատուցման համար նախատեսված անհրաժեշտ գույքը հասցնում է (ՀՀ 40 քաղաք, Երևանի 9 վարչական շրջան, ԱՀ Ստեփանակերտ քաղաք) մրցավայրեր՝ համաձայն ժամանակացույցի, պարգևատրման ցանկի համապատասխան կազմում է նվերների և գույքի բաշխման ցուցակները, որոնք հետագայում կազմում են ընդունման-հանձնման ակտի անբաժանելի մասը:

*** Եզրափակիչ փուլին՝ միջոցառման անցկացման համար անհրաժեշտ գույքը Կատարողը հասցնում է մրցավայր, Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական և դահլիճի ձևավորման աշխատանքները՝ համաձայնեցնելով ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության աշխատակազմի մասսայական սպորտի և ֆիզիկական դաստիարակության քաղաքականության վարչության հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն ք. Երևան, Աբովյան 9 ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն Հ/Հ 900011004489 ՀՎՀՀ 02586282 Աշխատակազմի ղեկավար՝ Վ. Էլոյան --- /ստորագրություն/ Կ.Տ	«Իմպերիում » ՍՊԸ ք. Երևան, Ա.Ավետիսյան 1127 «Ինեկոբանկ»ՓԲԸ Հ/Հ 2050622060861001 ՀՎՀՀ 00135548 Տնօրեն՝ Գ.Արթան --- /ստորագրություն/ Կ.Տ

Հավելված N 2
«28» 02 2018թ. կնքված
ծածկագրով պայմանագրի
Սպ-ՔՀԾՁԲ-18/05-2018

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Հազ.ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	92621110	Սպորտային միջոցառումների կազմակերպման ծառայություններ /Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն մրցույթի անցկացման/		10767.1	10767.1	10920.0	10920.0	10920.0	10920.0	10920.0	10920.0	10920.0	10920.0	10920.0	10920.0

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011004489 ՀՎՀՀ 02586282

Աշխատակազմի ղեկավար Վ. Էլոյան
/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ

«Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Ա.Ավետիսյան 1127
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ 00135548

Տնօրեն՝ Գ.Առյան
/ստորագրություն/
Կ.Տ

«28» 02 2018 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ-18/05» ծածկագրով պայմանագրի
100 - 2018

Հավելված 3

Պայմանագրի կողմ
«Իմպերիում » ՍՊԸ
ք. Երևան, Ա.Ավետիսյան 1127
«Ինեկոբանկ»ՓԲԸ
Հ/Հ 2050622060861001
ՀՎՀՀ 00135548

Պատվիրատու
Հայաստանի Հանրապետության սպորտի
և երիտասարդության հարցերի նախարարություն
ք. Երևան, Աբովյան 9
ՀՀ ֆինանսների նախարարության
գործառնական վարչություն
Հ/Հ 900011004489
ՀՎՀՀ 02586282

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և
_____, հիմք ընդունելով Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

_____
ստորագրություն

_____
ազգանուն, անուն

Կ.Տ.

Հավելված 3.1
« » ---------- 2018 թ. կնքված
«ՍՊ-ԳՀԾՁԲ -18/05» ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն